ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

ՃՇՀԱՀ-ի ՃՏՊ և Ժ ամբիոնի ասպիրանտ Մազեն Իբրահիմ Սաիդի «Սիրիայի Դամասկոս Քաղաքում փոխակերպվող (Դինամիկ) ճարտարապետության աղապտացիայի խնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ , ներկայացված ԺԸ.00.01 «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկ¬նա¬ծուի գիտա¬կան աս¬տ¬ի¬ճա¬նի հայցման համար:

Ատենախոսությունը ներկայացնում է Սիրիայի ճարտարապետական ժառանգության և գլոբալիզացիայի համադրմամբ, կայուն զարգացման կլիմայական սկզբունքների մշակումը: Փաստորեն, ներկայացվող ատենախոսության արդիականությունը նշված միջազգային թեմայի ճյուղային խորացումն է ՝ Սիրիայի Արաբական Հանրապետության և առանձնապես Դամասկոս քաղաքի օրինակով:

<u>Թեզի նպատակն է</u> Դամասկոս քաղաքի կառուցապատման բարելավումը տեղական արանձնահատկությունների հաշվարմամբ :

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, ընդհանուր եզրակացություններից, գրականության ցանկից և 82 դիտակտիկ ցուցատախտախներից ընդհանուրը կազմելով 141 էջ :

<u>Հետազոտության առաջին գլխում</u> ներկայացվում է թեմայի պատմագիտատեսական և փորձարարական տեղեկատվությունը, ապա վերջինիս փաստավելուծական մոտեցումներով ամրագրված ճարտարատիպաբանական ծավալատարածական և շինարարական տեղայնացման առաջարկություններ՝ հարիր Դամասկոս քաղաքի կառուցապատման իրակվիճակին: Ներկայացվել են Դամասկոսի պատմաաշխարհագրական, լանդշաֆտային և քաղաքաշինական ավանդական ու արդի թաղամասերի կառուցապատումը՝ ներառված առկա նշանակալի համալիրների ճարտարապետությամբ, որոնցում առանձնացվում է հատկապես «Ալ Ռազի» թաղամասի վերակառուցումը հին և նոր քաղաքաշինական համդրությունների վերլուծական մեկնաբանությամբ, ինչպես նաև Դամասկոսի ավանդական բնակելի ճարտարապետության մանրամասն վերլուծությունն ու դասակարգումը:

Երկրորդ գլխում վեր են հանվել բնակելի ճարտարապետական միջավայրի աստիճանական վերափոխման սկզբունքները։ Համեմատական վերլուծությամբ ներկայացվել են կինետիկ և դինամիկ ճարտարապետության զարգացման ընթացքը ավանդական և նորարարական ճարտարապետական ստեղծագործությունների համադրությամբ (Բակմինիստեր Ֆուլլեր, Վիլլյամ Ցյուկ, Խոսե Լիոնիդաս Մեխիա, Սառա Բոնմեյսոն, Քրիստին Մեյսին, Դ՝Արսի Թոմսոն և այլք), որի արդյունքում կինետիկ ճարտարապետությունը դասակարգվել է մի շարք ծավալատարածական վերափոխումներով այդ թվում՝ փոփոխելի տեղադրությամբ, ապամոնտաժվող, շարժական, փոխադրելի, տրանսֆորմատիվ, ոչ կարծր, կարծր և փափուկ համադրությամբ շինություններ և այլն, որոնք կարևորվում են կինետիկ ճակատները ձևավորված էներգոկոնսերվատիվ կայուն ներդրման մոտեցումներով ։ Այստեղ անդարադարձ է կատարվել նաև խելացի նյութերի ճարտարապետական կիրառմանը։ Նշված սկզբունքներով դասակարգվել են նաև ճակատային վերափոխվող կոնստրուկտիվ տարերը, խելացի և կոմպոզիտ նյութերից հավաքված ճակատների որակական դրսեվորումներով։ Այս ենթամասում առանձին ուշադրություն է հատկացվում նաև շենքերի տանիքային ծավալատարածական կառուցվածքների նորարարական լուծումներին։

Երրորդ գլխում արծարծվում են Դամասկոս քաղաքի շենքերի և համալիրների արդիականացման խնդիրները առկա գլոբալ փոփոխությունների ազդեցության ներքո՝ պատմական ժառանգության և նորարարական մոտեցումների համադրմամբ։ Գլխում շահեկան ընկալվում է դամասկոսյան վերափոխվող ծրագրերի ներգրավումը, ինչպիսիք են՝ 1.գլոբալիզացիայի դիրքերից վերանայվող «Ալ Ռազի» թաղամասի վերակառուցումը, 2.Դամասկոսի պատմական կորիզի պահպանության ծրագիրը, որի տեսական հետազոտություններն իրականացված են սիրիացի գիտնականների կողմից, 3. Դամասկոսի ինքնակամ տարերային կառուցապատված թաղամասերի կարգավորող ծրագրերը, այդ թվում են՝ Բարզեհ, Ռուկն էլ Դին, Ալ Մուհաջրին , Մազզեհ 86 թաղամասերը։ Վերջիններս այսօր լինելով ընթացքում, կարիք ունեն տեղեկատվության հագեցման և ընդհանրացման։ Հարկ է նշել, որ հարցը ատենախոսությունում արտացոլված է իր վերջին տվյալներով, որոնց

կապակցությամբ կատարվել են զանազան խորհրդատվություններ, այդ թվում և վերափոխվող ճարտարապետության առումներով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բարձր որակելով Մազեն Իբրահիմ Սահդի աշխատությունը և հարկ չհամարելով նշել որոշ վրիպակային դիտողությունները, ցանկանում եմ հատկապես նշել, որ աշխատությունում ընդգրկված դամասկոսյան քննական օրինակները ներկայացվեին առավել հագեցված դիտակտիկ նյութերով:

Մազեն Իբրահիմ Սահդի ատենախոսությունն ունի որոնողական բնույթ, որն իր դրական կողմերի հետ կարող է ունենալ նաև վիճարկելի հարցեր: Թեման արդիական է, հեռանկարային ինչպես նաև ուսուցողական ու կիրարական: Ատենախոսության հրատարակությունները արտացոլում են ներկայացվող թեզի կարևորագույն դրույթները: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Մազեն Իբրահիմ Սահդի «Սիրիայի Դամասկոս Քաղաքում փոխակերպվող (Դինամիկ) ճարտարապետության ադապտացիայի խնդիրները» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ներկայացնում է ավարտուն գիտական աշխատանք և այն համապատասխանում է ՀՀ –ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի յոթերորդ կետի պահանջքներին, իսկ նրա հեղինակ Մազեն Իբրահիմ Սահդիը արժանի է ԺԸ.00.01 «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի շնրոհմանը:

Ճարտ. թեկնածու, պրոֆեսոր՝ **Տ.Ս. Բարսեղյան**

Երևան, 17 օգոստոս 2023թ.

ՃՇՀԱՀ-ի գիտական քարտուղար

տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ **Լ.Հ.Լևոնյան**

Երևան, 20 օգոստոս 2023 թ.